


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
 Ե. ԹՈՐՈՍՅԱՆ
 Երևանի կամ արևելք
 գրու թիւն պէտք է ուղղել ան
 Տեղիւն ԱՐՇԱԿՈՅՍ րազրի
 ԳԱԶԻՐԷ (Երևանիստուի)
 Թիւ

E. TOROSSIAN
 Direc.- propr. du journal arménien
 ARCHALOUICE
 LE CAIRE (EGYPTE)
 Boîte Postale No.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|--------------------|----|
| ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ | |
| Տարեկան ողջ դահիւն | 60 |
| Վեցամսեայ | 35 |
| ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ | |
| Տարեկան | 20 |
| Վեցամսեայ | 12 |

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԿ
 Եւ թղթատարի ծախքը
 Խեղճագրութեան վրայ է :

Խոթագրութեան ուղղուած
 Գրութիւնք է՝ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
 Կանխիկ վճարելի են

Ն. Վ. ՈՒՄՊԵՐԹՈ ԹԱԳԱՌՈՐԻՆ

ՀՈԳԵԶԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆԸ ԵՒ ԳԱԶԻՐԷԻ

ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շատ տխրաբար պիտի ըլլար մեզի հա-
 մար, եթէ տեղույս Ազգ. Վարչութիւնն,
 անցեալ հինգշաբթի օրը Մուսքիի եկեղեց-
 ւոյն մէջ կատարուած Ուսպէրթօ թաղա-
 ւորին հոգեհանգստեան հանդիսաւոր պա-
 տարագին և արարողութեանց ատեն իր ներ-
 կայացուցիչները չ'ունենար :

Թէպէս Էմբարցիայի պաշտօնական լր-
 րագրոյն Օգոստոս 10 թիւ 222 ին մէջ « հայ
 գաղթականութեան պաշտօնական ներկայու-
 ցուցիչներ » յիշատակուած էր, սակայն դա՛
 դոհացում չ'էր տար ազգային անհատնե-
 րու հետաքրքրութեան և թերևս չ'իմաստ-
 թիւն մը իսկ առաջ դար :

Հետզհետէ մեզ հասած ստորոգ տեղե-
 կութիւնները սակայն, այդ ամեն չ'իմաստ-
 թիւնները կը փարատեն և հետաքրքրնե-
 րուն պէտք եղած գոհացումը կուտան : Թէ
 ինչպէս :

Իտալական Հիւպատոսարանը ի պաշտօնէ
 կը ծանուցանէ Ազգ. Վարչութեան Ուսպէր-
 թօ թաղաւորի մահուան գուժը և հոգե-
 հանգստի հանդիսաւոր արարողութեանց
 համար սահմանեալ օրը և ժամանակը :

Մեր Առաջնորդարանի անճարակ ֆոխ-
 Տեղապահը, կը մոռնայ թէ՛ չ'ուզէր անմի-
 ջապէս պէտք եղած զեկուցումներն ընել առ
 որ անկէ . և՛ սխալանաց մէջ կ'իյնայ :

Ազգային վարչութեան անդամք, դո-
 նէ այս պարագային մէջ, հոգածու կը գրտ-
 նուին այդ սխալը դարմանելու և կը յաջո-
 ղին մասնաւոր պաշտօնական պատգամաւո-
 րութիւն մը զրկել նոյն օրուան հանդիսա-
 ւոր թափօրին :

Մեր հետաքննին ակնարկները աւելի
 առաջ մղելով կը տեսնենք նաև որ, հոգե-
 հանգստեան արարողութեանէն մէկ օր վերջ,
 Իտալական Հիւպատոսարանի կողմէն հե-
 տեաւ շնորհակալեաց պաշտօնական նամակը
 կ'ուղղուի Ազգ. Վարչութեան, որոյ բնա-
 գրին պատճէնը ձեռքի տակ ունինք և հրա-
 տարակութիւնը անհրաժեշտ կը դատենք :

ԽՄԲ .

AGENZIA DIPLOMATICA
 DI
 S. M. IL RE D'ITALIA

Le Caire le 10 Août 1900

Messieurs

Je tiens à Vous dire combien j'ai été
 touché de la démarche qu'au nom de la
 colonie Arménienne Vous avez bien voulu
 faire, dans ces tristes circonstances au-
 près du Représentant du Roi pour lui
 exprimer Vos condoléances et joindre
 ainsi à la douleur d'Italie celle d'une po-
 pulation pour laquelle nous avons tou-
 jours eu des sentiments de la plus pro-
 fonde sympathie.

Veillez donc agréer mes remercie-
 ments et ceux du gouvernement Royal,
 et recevez Messieurs, l'expression de ma
 considération très-distinguée.

Le Ministre d'Italie
 TUGINI

Messieurs
 Mrs. Agop Assadourian et
 Garabed Bey Cherdjian
 Le Caire

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
 Ն. Վ. ԹԱԳԱՌՈՐԻՆ ԻՏԱԼԻՈՅ

Գահիրէ 10 Օգոստոս 1900

Տեա՛րք,

Խորապէս զգածեալ եմ այս տխուր
 պարագաներու մէջ յանուն Հայ ազգին Ն.
 Վ. ներկայացուցչին արտայայտած ձեր ցա-
 ւակցական զգացումներուն համար, որով Ի-
 տալիոյ սուզին միացուցիք վշտակցութիւնը
 ազգի մը որուն համար խորին համակրու-
 թիւն մը ունեցած ենք միշտ :

Հաճեցէ՛ք ուրեմն ընդունիլ, Տեա՛րք,
 իմ և Արքայական կառավարութեան շնոր-
 հակալիքը, ինչպէս նաև խորին ակնածա-
 նացս հաւաստիքը :

Դիւանագիտական Գործակատար Իտալիոյ
 ԹիւճիՆԻ

ԻՅՒԵԼՈՒ ԶԱՃՈՅՔԸ

Մարդկային սեռը իւր ներքին դր-
 զումներուն գոհացումը բազմազան հաճոյք-
 ներու մէջ փնտռելու միակ նպատակա-
 յար և հանապաղ կ'աշխատի ու կը տքնի :

Մեր ամենուս ծանօթ է թէ՛ հաճոյք ըս-
 ուածը ըստ ինքեան իւր ստորաբաժնուճնե-
 րը ու բազմադիմի ճիւղաւորումները ունի-
 կան որ բարի են, որոնց վայելումը կրնայ
 մեծապէս նպաստել մարդկային մտքին ու
 սրտին, պէսպիսի բարիքներ սփռելով ամեն
 կողմ . իսկ կան ալ՝ որ չար ու սոցեղ են ու
 ընց վայելումը միևնոյն ատեն կը նսեմա-
 ցնէ իմացական կարողութիւնները և կը կաշ-
 կանդէ նաև վսեմ զգացումները : Այս վեր-
 ջիններուն շարքէն կրնանք դասել իշխելու
 հաճոյքը, որ այժմու լուսամիտ ու քաղա-
 քակիրթ աշխարհին մէջ ընդհանրական ու
 բազմապատիկ սովորութիւն մը ըլլալու հան-
 դամանքն ունեցած է : Իշխելու հաճոյքը
 խիստ սկեպտական հաճոյք մ'է՛ որ կար-
 ծես փոթորկայոյզ ովկէսնէ մը յորդելով,
 այսօր աշխարհիս ամեն կողմը տարածուած
 է՛ տեղ տեղ լճակներ դոյացնելով, ու-
 ըրուն մէջ իյնալու տարաբաղդութիւնը ու-
 նեցող մարդուն գրեթէ անկարելի կը դառ-
 նայ անոր մէջէն ազատիլը : Կը նմանի գու-
 նագեղ սիրուն ծաղիկ մը բերրազան բոյրե-
 րուն, որուն ազդեցութիւնը մեծամեծ չա-
 րիքներու ծնունդ կրնայ տալ : Իր արձա-
 կած ցասկոտ ու մռնչող բիւր հովերուն ու-
 ըրտումն ու սարսափը ուժգնապէս կը մտրա-
 կէ ազնիւ ու ոսկի սիրտերը : Մութ ամպե-
 րուն մէջէն սուրացող փայլակն է ան, ու-
 ըրուն լոյսը նախ աչքերը կը մթագնեցնէ և
 ապա կուրացնելու միակ անգթութիւնը կ'ու-
 նենայ : Օրուան դիւցազնուհին եղաւ նա, որ
 իւր շրջազգեստին խշրտիւնովը եկաւ սթա-
 փեցնել նահապետական խոր քնոյ մէջ թաղ-
 ուած մարդկային ազգը, և ըմբռնից ա-
 նոր ոսկորներուն ծուժը, ներարկելով միև-
 նոյն ատեն անոր մէջ իշխելու մահաբեր թոյ-
 նը :

Եւ ճիշտ այն թուականէն ահա մեր ան-
 մարմին երեսներուն վրայ նախշուած ոսկի
 զուարթութիւնը մարեցաւ :

Ո՛հ, տենդո՛տ դար :

Վեհապետներ, իշխաններ, վերջապէս
 կառավարութիւններ ձեռք ձեռքի տուած՝
 անվեհեր ու անխոտով, ստրկութեան սիրոյն
 համար կրակ վառելու ստորնութեան դիմե-
 ցին . ու այդ անչէջ հուրին շուրջը բոլոր-
 ուած՝ ի սրտէ յստեցին աներեւակայելի
 ուժգնութեամբ և եռանդուն հետևողու-
 թեամբ մը իշխել, ճնշել և ստրկացնել
 մարդկութիւնը պարզապէս զանոնք թէ՛ դա-
 սալիք ընելով և թէ՛ բնութեան ասոնց պար-
 գեւած անհատական արգար իրաւունքները
 կոխտեղով ու բռնաբարելով :

Ձի մարեցաւ երբէք այդ աւերիչ կրակը,

որուն ալ և ահեակ արձակած բոցերը ան-
յազ կը լափէր մարդկութեան վեհ ու վեհ
զգացումները ստրկութեան մատնելով զանի-
Այո՛, չեն կրնար ազատութեան կենսական
չրով խեղդել, քանի որ այդ տիպար հրէշ-
ները հնգիկներու վիճակին (հնգիկներու Ս.
գիրքը) վրայ սրտագին ուխտած էին իրենց
վառած այդ սրբազան հուրը յաւէտ ան-
շէջ պահելու :

Իսրայելու մշտապէս ընթացքը երբէք
կերպարանափոխ չ'ըրաւ այս երեւոյթը դէ-
պի լան . շատեր զոհուեցան բռնապետ իշ-
խանութիւնները ջնջելու և գերութիւնը աշ-
խարհիս վրայէն բառնալու անուրջով . սա-
կայն աւա՞ղ, որ բոլոր այդ զոհողութիւն-
ները օգտակար արդիւնք մը չ'ունեցան .
բաց աստի իշխելու հաճոյքն ալ սակաւա-
թիւներէն բազմութիւններու մտքին ու սրբ-
տին մէջ փոխանցուեցաւ :

Իսկ վերջին ժամանակներս, որչափ կը
յիշեմ, 1860 ին, երբ Ամերիկայի սար-
կութեան ինքիբը ծաղում առաւ, Հառի-
սոնի մը մտքին մէջ միայն գաղտնի ուժ մը
գոյանալով ելաւ հրացան մը ուսը առնելով,
գնաց կռուեցաւ գերութիւնը ջնջելու . այո՛,
Հառիսոն մը միայն եղաւ որ իւր գարուն
բոլոր ձայները հնչեցուց :

Անիշխանականներ, ընկերվարականներ,
յեղափոխականներ, որոնք տարբեր տար-
բեր ծրագիրներով և այլազան ուղղու-
թեամբ գործեցին և որովք մինչև հիմա ալ
կը գործեն, եթէ իրենց բուն կէտ նպա-
տակին շօշափենք, պիտի տեսնանք թէ՛ ու-
րիշ գաղափարի չ'են ծառայեր, բայց եթէ
բարձր պահել ազատ մտքին դերն ու նշա-
նակութիւնը . ճողոպրել գերութեան մահա-
բեր ճանկերէն և վաղ կամ անսպաս հաս-
նիլ ազատութեան հանգրուանը :

Տխուր երեւոյթ մ'ալ սակայն, որ կը
ներկայանայ մեր առաջ, այն է՝ իշխելու հա-
ճոյքը մեր Հայոցս մէջ : Կրկեր, վաճառա-
կանը, սեղանաւորը, գիտնականը, վարժա-
պետը, վերջապէս ամեն անոնք, որոնք ի-
րենց տրամադրութեան ներքև ունեցած են
ստորագաս պաշտօնեաներ՝ ասոնք մասնա-
ւոր իղձ մը ունեցած են իշխելու, ճնշում
բանեցնելու . հարուածելու, վերջապէս զա-
նոնք դատափետելու ու նշաւակելու հա-
մար, իրենց խելագատակէն ինչ որ ժայթ-
ի՛ր՝ դուրս հանել :

Արդեօք մեծարուելու բուն մարմա՞ն
է, որ կը մղէ զիրենք այսպիսի հոգեկան
ստորնութեան ու կատաղի պարսաւի մը :

Ստորնացուցուցիչ գաղափարներ, որոնք
միշտ խոչնդոտ կը հանդիսանան մեր զար-
գացման ու յառաջդիմութեան :

Մեր հանրային ձեռնարկներուն մէջ ալ
նա մանաւանդ իշխելու հաճոյքը այնպիսի
մեծամեծ ծաւալներ գտած է, որ կարելի
չ'է եղած երբէք այդ շարիքին առաջին
առնուլ, որով մեր օգտաշատ ընկերու-
թիւններն միանգամ ընդ միշտ վտանգ-
ուած են :

Ուրեմն, եթէ կարելի է շնանք գե-
րակշռել այդ աղտոտ ու սգեղ հաճոյքը որ
հաճոյքներուն ամենէն արհամարհելին ու
անպատուարներն է . քայքայելու համար-
ութեամբ և խոնարհ սրտով վերաբերուինք
մէկզմէկու հետ . շնանքը ըլլանք նախ
մենք մեր մէջէն ի բաց վանել այդ արմա-
տացած անարդ հաճոյքը, ու յետոյ մեր ար-
գար պահանջները ձեռք ձգելու համար ո-
գի ի բռնի կռուինք անոնց դէմ, որոնք

կ'ուզեն մեր ձայնը իրենց շահամուտութեան
ու փառասիրութեան ճիրաններուն տակ
խեղդամա՞ծ ընելով իշխել մեր վրայ :

Թերթիս առաջին էջին երկրորդ սիւ-
նակին մէջ հրատարակուած Խոսիական հիւ-
պատոտարանի կողմէ Ազգ . առաջնորդարա-
նի ուղղեալ շնորհակալեաց նամակին թարգ-
մանութեան տակ, Հայ Պատգամաւորութեան
Մեծ . Տնօրէն ՅԱՍՏՈՒՐԵԱՆ Ի և ԿԱ-
ՐԱՊԵՏ ՊԷՅ ՇԵՐԻՏՃԱՆԻ ի անուններն գրա-
շարական անուշադրութեան արդեամբ նշա-
նակուած չ'են :

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՆԱՆԱՅ ԹԷ ՄԵՆԵԼԱԹԱՂ

Պատահած է ձեզ երբէք, որ ձեր բնա-
կավայրէն ժամանակ մը բացակայելէ յետոյ,
վերադարձին բնտանեկան յարկէն մէկը պա-
կաս գտնէք, որ հեռաւոր տեղ մը միկնած
ըլլայ :

Սրտի ինչ սեղմում մը, ինչ մորմո-
քում մը կ'զգայ մարդ, որքա՞ն դառն կ'ըլ-
լայ կրած յուսախաբութիւնը, ինչո՞ւ ներ-
կայ չը գտնուէր մեկնման պահուն և հրա-
ժեշտի սիրազեղ ողջոյնը չ'տար անոր գըր-
կախառնումով :

Հապա այդ մեկնումը երբ անդամ ու
յաւիտեանական ըլլայ, զգացած ցաւն ու կր-
կիծը անհամեմատ սաստիկ և դառն կ'ըլ-
լայ հոգին անմխիթար վշտով մը կը հա-
մակի :

Գոնէ, կը մտածէ մարդ, վերջին պա-
հուն ներկայ գտնուէր ու յարգանքի նուի-
րական պարտականութիւնը կատարէր . . . :

Այս վերջին օրերս նմանօրինակ դէպք
մը պատահած է հոս :

Չի կարծուի սակայն թէ մեռնողը հե-
ռու, օտար երկիր մը կը գտնուէր, ո՛չ .
այլ քաղաքիս մէջ մեռած է՝ մօս իր աղ-
զականաց . և սեղուոյս հայ քահանաներէն
մին, ննջեցալը — կեօնրիկին մալ փախցնելու
պէս — անշուք, անշուք, տարած թաղած է գի-
րեզմանատան մէկ աննշան անկիւնը, այն
մասին մէջ, որ բաղդին զրկեալներուն, չի
վճարող աղքատներուն յատկացուած է :

Մինչդեռ ասդին հանգուցեալին ամենա-
մօտիկ ազգականները (քոյրերը և եղբայր-
ները) երբ օր վերջը միայն տեղեկութիւն
ունեցած են գործէն :

Պատմենք այդ սարսրիկ եղբուկները .
տեղացի ընտանիքներէն միտոյն մէկ անդամը
երկար ժականակէ մը ի վեր Գաղղիական
հիւանդանոցը կը գտնուէր անդամանելի
հիւանդութեամբ մը վարակուած . անցեալ օր
հիւանդանոցի կողմանէ Ազգային Առաջնոր-
դարանին իմաց կը տրուի թէ՛ հիւանդը մե-
ռած է . և ահա բարիմաց և խղճամետ
փոխ — Տեղապահը, փոխանակ հանգուցեալին
ընտանեացը լուր տալու, ինչպէս կը պա-
հալէր տարբական պարտաճանաչութիւնը,
իր հոգեւոր եղբայրներէն մին ուղղակի կը
զրկէ հիւանդանոց . և նա ալ ննջեցալը
տանելով կը թաղէ անտէր անձանօթ մէ-
կու մը պէս :

Կրնաք երեւակայել սպաւթիւնը և
կակիծը ննջեցեալին պարագայիցը, որոնց այդ-
պէս կը զլացուէր նուիրական վերջին պարտա-
կանութիւննին կատարելու : Պարտականու-
թիւններ, որոնք բոլորովին անձանօթ ըլլալ
կ'երեւին տեղուոյ քահանայից, որք աւելի պատ-
րաստականութիւն ցոյց կուտան, ինչպէս սա
պատմութիւնէն ալ կ'երեւի, մեռեալի պաշ-
տօն ի գործ գնելու, քան թէ օրինապահ կրօնա-
ւորի, հոգեւոր բարի հօր պարտականութիւն-
ներ կատարելու :
Սոյն պարագային մէջ անշուշտ ամենէն

աւելի մեղադրելին փոխ-տեղապահն է, որ նըն-
ջեցեալին տանիքէ քահանան կը գտնուի :
Ինչ բացատրութիւն տալ իւր այս պարագա-
կելի զանցառութեան . պարտուց անգիտակցու-
թիւն թէ նուստացումի գծուած գիտաւորութիւն
մը, եթէ պարտականութեան անգիտակցութիւն
ենթադրենք, սակայն գոնէ (քիչ թէ շատ) շա-
հու տէնջը, որ միակ ազգական ու խթանն է մեր
քահանայից, թոյլ չ'պիտի տար իրեն անշուշտ
այդպէս անհոգ ու անտարբեր մնալ : Իսկ եր-
կրորդ պարագային գաղով, այսինքն թէ մաս-
նաւոր թաղուն նպատակաւ մը այդպէս վար-
ուած է, իր կողմանէ այդպիսի վարմունք մը
այն աստիճան մեղապարտ և անազնիւ է, որ
մեզի խիստ ծանր կուգայ այդ տեսակ ենթադ-
րութիւն մը ընել իւր մասին :

Իրմէ բացատրութիւն պահանջուած ատեն
գրեմք ինչ պատասխան տուած է Քրիստոսի այդ
նախանձայոյզ պաշտօնտանայն . « պէ՛ ճանում, ի-
մաց տրուէր նէ ինչ պիտի ընէիք . այսքան
ժամանակ է հոն թողած էիք, հարցնող փնտը-
ող չիկար . (1) առաջնորդարանը կը վճարէր
ամսականը եւ այլն : »

Կը հարցնենք իրեն ուրեմն թէ՛ կարօտ ըլ-
լալը, Ազգ . Առաջնորդարանէն հոգացուելը, մի-
թէ աննեղելի յանցանք է . անանկը, չբաւորը
միթէ մարդ չ'է՞, միթէ անարժան է թաղ-
ման պատշած հանդէսի . ուրեմն ննջեցեալի
մը համար կատարուած հանդէսները մտացա-
ծին աւելորդ փանքաղանք են . . . :

Տուած այդ բացատրութիւնը իր ըն-
թացքէն աւելի պարարակելի է . և և տա-
կաւին կը տրանջան թէ՛ ժողովուրդին քով
հաւատք, պատկառանք չէ՛ մնացած :

Սոյն դէպքը տեղի ունեցած է Վարդա-
վառի Մեռելոցի օրը :

Արդ՝ եթէ ննջեցեալին եղբայրը և կամ
մօտիկ մէկ ազգականը գերեզմանատունը գըր-
նուելու ըլլար, ինչ ցաւալի տեսարան մը
պիտի պարզուէր . այդպիսի արհամարհող
զանցառութիւն մը, անշուշտ գայթակղելի
հետեւանք մը կ'ունենար . բայց այս բա-
նըրը մտածող ո՛ւր՝ մեր արդի կղերական-
ները ո՛ւր :

Անցեալ ժամանակներու մէջ ալ շատ
քիչ ուսեալ կրօնաւորներ ունեցած ենք .
մանաւանդ քահանաները զրեթէ առանց բա-
ցառութեան տգէտներ էին . սակայն այդ
բարեմիտ կրօնականները գոնէ երկիւղած
օրինապահներ էին . պարտաճանաչ և նա-
խանձախնդիր՝ իրենց պաշտօնին և եկեղե-
ցական կարգին ու սարքին . իսկ ասոնք
կարծես մի միայն մեռել թաղելու և հո-
գոց ըսելու համար այդ նուիրական պաշ-
տօնը ստանձնած են և իրենց մտաւորու-
կան կարողութիւնն ալ թոյլ չ'տար որ
ստակէ անդին անցնին :

Ժամանակի պահանջմանց համապատաս-
խանող քահանայի պէտք կայ . մեր ազգի
այդ փոսած մասին կեղտերը մաքրելու հա-
մար իրական գարմանի պէտք կայ :

ՏԵՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԸ :

(1) Հիւանդին պարագաներէն մին մերթ ընդ
մերթ կ'այցելէր իրեն անհրաժեշտ պէտքերը հո-
գալով . այս պարագան կրնայ ստուգուել յիշ-
եալ հիւանդանոցի Տնօրինութիւնէն :

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՅԵՐՈՍԱՂԷՍ

Գրօշակի, Մարտի, Իրաւունքի և և այլ
արտասահմանի լրագրաց մէջ ցաւօք սրտի կը
կարդանք թէ . — Երկաթէ պատրիարք մական-
ուամբ . — օժեալ Իզմիրլեան Սրբազանը ոչ մի-
այն հիւանդութեամբ կը տառապի, որուն կ'ե-
րեւի թէ Սուրբ Երուսաղէմի գիշեր ցերեկ լիա-
պորտն ուտող խմող միաբանից Աստուածահա-
ճոյ օրհնութիւնը չ'է կրցեր օգտակար ըլլալ, այ-
ժմ՝ այս հաւատքի խնդրը թող Երուսաղէմի
տաճարին վերապահուի, մենք դանք աւելի ցա-
ւալի, աւելի խղճահար, և աւելի անհանդուր-
ժելի պատմական իրողութեան մը, այն է՝ նո-
րին ազգանուէր Սրբազնութեան նիւթական վի-

ճակատ տառապելու ազգին կարի անպատուարեր կացութիւնը, ազգին անձնագործ եղող իրմիր- ընտան Սրբազան, Երուսաղէմի պէս հարուստ ե- կամուտի, հաշիւ չ'հարցուելու ազատ միաբա- նութեան մը մէջ յիշատակէ կարօտ մնայ, այն է՝ իւր անձնական պէտքերը չ'կարենալ հայթա- թելու չափ անօթի մնայ, ալ ասկէ աւելի ինչ ամօթ եւ ինչ անպատուութիւն Հայ ազգին հա- մար :

Անօթի փորով կեանքը սպառէ ազգից հա- մար, եւ անօթի փորով մեռի ազգից համար, երկու բարոյական կամ որ ճիշտն է եկեղեցական ծայրայեղ ոճիւր, որոնք կը զայրացնեն զգա- ման տէր մարդը :

Ուրեմն ինչ ըսել օտարին, երբ օտար է, եւ օտարի իրաւունքը ունի :

Այս դառն պարագային մէջ բացորոշապէս մեզ կը մնայ ենթադրել թէ, Սուլթանն է Երու- սաղէմի պատրիարքը, եւ ոչ այլ ոք, վասնզի երբ ըստ բժշկաց օրափոխութիւնը կ'արգիլուի, եւ նիւթականը կը պակսի, պարզապէս զանի այս վիճակին մէջ անդարման եւ անսնունդ մեռ- ցրեալ ըսել է, եւ ինչո՞ւ համար, վասնզի իւր ազգին լաւ ծառայեց, ահաւասիկ բոլոր յան- ցանքը . . . : Հետեւապէս ուշադրութեան ատէք թէ, վրէժխնդրութիւնը մինչեւ գերեզման կը հասնի, եւ մեր անհոգութիւնը մինչեւ յետին նախատինք :

Եւ աւելի ցաւալին եւ երկրայելին կայ, այն է թէ՛ Երուսաղէմը երբ կը լաւ նիւթական տառապանքը հրատարակեալ այլ եւ այլ թեր- թերու մէջ, ինչո՞ւ ուրեմն հերքում մը չի հը- րատարակեր ի միամտութիւն ժողովրդեան (թող սուտ ըլլայ, հոգ չէ, առաջինը չէ ա' .) որ այս ալ եղելութեան ստուգութիւնը հաստատող ան- ժխտելի պարագայ մ'է եւ հայ ժողովուրդը առ ոչինչ համարող արհամարհանք մը, զգուելի սր համարանք մը :

Ժողովրդին հացը ուտել, ժողովրդին շը- նորհիւ յարգանքներ վայելել, ժողովրդի դարա- լոր հաստատութեանը տիրել, եւ անոր կարեւո- րութիւն չ'տալ, մեծ նախատինք մ'է ազգաց յանդիման, անջնջելի արատ մ'է պատմութեան մէջ, եւ անթողի մեղք մը հայաստանեայց ե- կեղեցւոյ անաչառ դարաստանին առջեւ :

Ինչպէս Աստուած պէտք է մեր ազգին օգ- նէ, այնպէս ալ կը պաղատինք որ օգնէ իզմիր- լեանի ազգանուէր կեանքին :

Ս . Ֆ .

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՒ ՄԵԿՆՈՒՄ

Կը տեղեկանանք թէ՛ Պոլսոյ մէջ երբեմն ա՛յնչպիսի համակրանքներով շրջապատուած « ՀԱՅՐԵՆԻՔ » օրաթերթի Տէր և Տնօրէն Յով- հաննէս Էֆէնտի Շահնազար, քանի մը օր առաջ Աղէքսանդրիա հասած է և թէ՛ նը- պատակ ունի Եգիպտոս հաստատուիլ :

Ուրախառիթ է այս մեզի համար որ Ե- գիպտոսի մէջ արդէն գտնուած խոհուն և ազգասէր անձանց թիւը կը բազմապատկէ Յովհաննէս Էֆէնտի Շահնազար, հոս հաս- տատուիլ ուղեւորը :

— Կարապետ Էֆէնտի Նաւասարդեան, որ ութը տարիներէ ի վեր տեղւոյս Աղգ . վարժարանին մէջ կը պաշտօնավարէր, ամ- սոյս վերջ պաշտօնով Չմիւռնիա կը մեկնի : Տիրար Նաւասարդեան ձեռնհաս և խղ- ճամիս ուսուցիչ մ'է . սակայն Գահիրէի մէջ շատ անգամ շատ քիչ գնահատուեցաւ իւր արժանիքը, և երբեմն ալ յանիրաւի զրկանք- ներու ենթարկուեցաւ Եսամիլներու մղած անօգուտ պայքարներուն պատճառաւ :

Կը ցաւինք որ Տիրար Նաւասարդեան կը մեկնի . Աղգ . դաստիարակութեան անխոնջ մշակի մը մեկնումովը՝ կարևոր բաց մը պիտի մնայ տեղւոյս ուսուցչական շրջանակին մէջ :

և վստահութեամբ կրնանք ըսել թէ՛ Աղգ . Վարչութիւնը ջանքեր չ'պիտի ընէ և կամ չ'պիտի յաջողի անոր տեղը պարսպ չի ձգել :

ԱՌ ՔԵՉ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՍ Ա . ՆԱԳ

- Վրան ցնցոսի ,
- Ինկը հնոսի ,
- Գիսե՛ս ո՛ղ և այլն ,
- Բանաստեղծ մ'ե այլն .
- Դեմք ունի սզոյն ,
- Ճակասն և խոհուն ,
- Զգացնալք հաւալն ,
- Բանաստեղծ մ'ե այլն .
- Կ'երգէ հայրենի ,
- Սերն հաւակրեչի ,
- Երգօք արսածայն ,
- Բանաստեղծ մ'ե այլն .
- Բայց երբ տեսնու որ ,
- Նօթի աւելն օր ,
- Կը շրջի միայն ,
- Բանաստեղծ մ'ե այլն .
- Երբ ըսնէ քեզի ,
- Ո՛ղ և Երկնի
- Յոյժ յոյժ սիրական
- Բանաստեղծ մ'ե այլն .
- Ո՛ղ գրեք յեզուն ,
- Հոգոց գգայուն .
- Թե քեզի հարց տան
- Բանաստեղծ մ'ե այլն .
- Աստուծի ետև
- Ո՛ղ կայ մեր վերև
- Ըսէ ճշարտան ,
- Բանաստեղծն և այլն .
- Երբ իր գերեզման
- Մնայ աննշան .
- Գիտցի որ մի հայ ,
- Բանաստեղծ մ'ե այլն .

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐՔԱՅԱՍՊԱՆԸ . — Պրէսսի կեդրոնական բանտը փոխադրուեցաւ : Մարդասպանին խօսուածքը միշտ յանդուգն է, առաջին հար- ցաքննութեան մէջ ինքզինքը յեղափոխա- կան, անիշխանական հռչակած է և ըսած է թէ պատրաստ է յարատուելու : Պրէսսի տե- սած են հանդիսի պարտէզին մէջ կնոյ մը հետ :

Կը հաստատեն թէ Միլանի ոստիկանու- թիւնը Ռամէլա անուն մէկու մը տունը խու- շարկութիւն մը կատարելով կարևոր թղ- թածորար մը գտած է որ կը ցուցնէ թէ Պը- ռէսսի Ամերիկա գտնուող անձանց հետ յա- րաբերութիւն ունի եղեր և այս յարաբե- րութիւնները կապ ունին Պրէսսիի գործած ոճրին հետ :

Պրէսսի կը բնակէր Ռամբլաի տունը ձի- ուսթի Թօսքան անուն մարդու մը ընկերակ- ցութեամբ, սրճարան մը կը յաճախեն ե- ղեր այդ մարդուն հետ, սրճարանին մանչը յայտարարած է թէ՛ վսեմ գաղափարի մը վրայ խօսելին լսած է որ աշխարհք պիտի զարմացնէ եղեր : ձիուսթի ձերբակալուած է :

Պրէսսի Ռամբլաի մօտ բնակած ատեն Ֆրանսացի եմ կ'ըսէր, և միշտ Ֆրանսերէն կը խօսէր :

Ոճրին ամեն պարագաները կ'ապացու- ցանեն թէ երկարօրէն պատրաստուած բան մ'էր :

Հաստատուած է որ Պրէսսի Բաթէրը- նէն եկած է . կը խօսի ֆրանսերէն, անգ- ղիերէն և սպանեօլերէն . Միլանի մէջ քա- նի մը ձերբակալութիւններ կատարուած են : Պրէսսիի եղբայրը Թիդանօթաձիգ պուճ- գի մը մէջ տեղակալ է և Գալերթի պա- հակախուժին մէջն էր :

ԼՈՒՍԻՆԵԱՆՔ

ԳԻՑ
ՄԵԼԻՔ Ս . ԴԱԻԻԹ ԲԷԿ

160 էջ . Տպարան Վիէննայի Միթարեանց 1900 . գինն է 2 Ֆրանք :

Կը ծախուի հետեւեալ պայմաններով . Չորս հարիւր օրինակ Արարկիրի Որ- բանոցին համար . երեք հարիւր օրինակ Կիպրոսի Որբանոցին համար . իսկ մնացած երեք հարիւր օրինակը հեղինակին համար : Հեղինակը այդ 300 օրինակները կը պահէ իւր ծախքերն հանելու և բարեկամ- ներու նուիրելու համար . իսկ միւս օրի- նակները բոլորովին անձեռնմխելի են զի հեղինակը նուիրած է յիշեալ երկու Հայ Որբանոցներուն :

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հինգշաբթի օր Օգոստոս 2 ին Յուլյա- հանդէսի տօներու սրահին մէջ բացուեցաւ բժշկական միջազգային ԺԳ բզ համաժո- ղովը :

Ժողովին կը մասնակցէին 6000 բժիշկ- ներ . որոց 2000 էն աւելին Ֆրանսացիներ էին 600 ը Ռուսներ և մնացեալները զա- նազան ազգութիւններէ :

Այս համաժողովին կը մասնակցէին նաև բաւական թուով Հայ բժիշկներ :

Մեր մինչև օրս հաւաքած անուններն են . Տօք . Ումիկեան, Գոնեան, Լօրիսելիք- եան, Տէր-Գրիգորեան, Թիֆլիզեան, Գ. Սար- գիսեան, Զալեան, Բագուէն . Փաշալեան, Օրմանեան՝ Կ . Պոլսէն . Նէվրու լեան՝ Ռոտ- ոսթոյէն (Թէքիրտաղ) :

Այս առթիւ հետաքրքրութենէ զուրկ չ'է իմանալ թէ քանի մը հայ բժիշկներ եւ գեղագործներ կան Ֆրանսայի մէջ հաս- տատուած : Ահաւասիկ ցանկ մը որմէ հա- ղիւ թէ մէկ երկու հատ գուրս մնան .

Տօք . Քէմհաճեան՝ Բարիզ . Ասլանեան՝ Գուլուսիէ . Ասլան՝ Օվէրնի մէջ . Նազըճեան Բարիզ . Գ . Կեսարեան, Բօլօլեան, Սըքրեան՝ Բարիզ . Ե . Ունճեան՝ Ալիէ գաւառ . Քարա- քաշեան՝ Պուռ Լա Ռէն . Թադէոսեան՝ Նոր- միոյ մէջ . Հազարապետեան՝ Այվազեան Գալ- վատուի մէջ . Ճէլալեան՝ Սօն և Լուառի մէջ . Ղազարոսեան՝ Օպի մէջ . Մարմարեան Ալիէյի մէջ . Ն . Զարիֆեան՝ Սօմիլի . Ա- ղաւեան Նորմանտիա . Միսեան Իօնի մէջ և Տօք . Յակոբեան՝ նորաւարտ Բարիզի մէջ թաշճեան Ալիէյի մէջ :

Բոլոր այս Պարոնները Բարիզի համալ- սարանէն ելած և ըստ նախկին օրէնքի տրամադրութեան Ֆրանսա հաստատուած են :

Առաջին կարգի գեղագործներն են (այսպէս կ'անուանուին այն գեղագործնե- րը որոնք Բարիզի համալսարանէն կ'ելլեն)

Պ. Պ. Խաչիկ Հիւն. քերականական Բա-
րիզ. Դաւիթ » Պուս Գո-
լումպ. Սերովրէ » Պոնաի և
Լ. Թուլգանեան՝ Պէր. Բէաթիպեան՝ Բարիզ
որ հրէի մը անունը առած և գեղարան մը
բայցած է և հայերէն մէծ համակրութեան
չի վայելէր :

Մեծի Ս. ԴԱԻԹ-ԲԼԿ :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՁԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 12 ՕԳՈՍՏՈՍ 1900

Table with 2 columns: Երկու թիւ (Two numbers) and Պարզ և (Simple and). Rows include numbers like 2718, 5061, 4761, 5367 and their corresponding simple values like 1,000, 120, 40.

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 12 ՕԳՈՍՏՈՍ 1900

Table with 6 columns of numbers. Rows include 778, 8304, 4075, 516 and 7096, 6717, 4454, 8491.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅՅՈՒՆ

Երևանի Տիար Ս. Յէլէկեանի վերո-
յիշեալ հեղինակութեան ԵՐՐՈՐԴ ֆորման
ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափաքողք ,
ինչպէս արդէն ծանուցուած է , կրնան դի-
մել « Արշալոյս » ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱ-
ՐԱՆԸ . ոգի հեղինակը կը գտնուի կէս
օրէ վերջ ժամը 5- 7 :

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳՆՐՈՒ

ՆՏՐՔԵՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտ-
ներու աշակցութեամբ եռաձայն և քառա-
ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն
գնել փափաքողներն կամ բաժանորդագր-
ուիլ ուզողներն, կրնան դիմել՝ Արշալոյս ի
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօ-
րէնին :

Տիար Մ. Հայկունի աստի ուղեւորե-
լուն պատճառաւ , իւր հրատարակած « Վա-
րագոյր Մարդկային Կենաց » գրքին սա-
կաւաթիւ օրինակներն յանձնած է Արշա-
լոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ : Գնել փա-
փաքողք կրնան հոն դիմել :

Քանի մը օրինակ մէկ անգամէն գնու-
ղին 20 առ հարիւր զեղջ կը լինի :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

« ԱՐՇԱԼՈՅՍԻ »

ՀԻՄՆԵԱՆ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԸ

Օտանկիյի դեղատանին դիւնացի փողոցին մէջ .

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առա-
ւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 :
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ,
կ'ընդունուին .

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիրքեր,
Հրատարակութեան Մասնաշրջաններ, Տեղեկագիրներ,
Կանոնագիրներ, Տոմարներ և այլ և այլ վաճա-
ռականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և
չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ :

ԿՈՊԵՌՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ .

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր
լուսանկարչատուններու մէջ աշխատելով,
արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ
փորձառութիւն ստացած է :

Պոլսոյ մէջ Ապուլլաճ եղբարց տան,
ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու,
քաղաքի մէջ վերջին անգամ Լ. Ե. Բէճեան
գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը
վարած, այժմ՝ առանձին գործատեղի մը
կը հիմնէ Էօզպիֆիյի Շարիա Գամաշ օթիլ-
ՇէֆէրՏՍԻ ճիւղ գիմաց թիւ 3 արարթըմանին
երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսա-
նկարներ, ինչպէս եւ գուրջ կուսկներ
ի հարկին :

Ակրանսիանան բնական մեծութեամբ :
Կենդանագիրներ ամբողջական մեքենայով
որոնք երբէք չ'են աւրուիր :

Գունաւոր լուսանկարներ ամեն մե-
ծութեամբ բնական գոյներով միկետարիտ :

Իւզաներկ եւ շրաներկ պատկերներ և շն :

Լուսանկարի եւ պատկերահանութեան
վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ըն-
դունի ռքորոյ, Տիպոգրաֆիան եւ շն :

Իրեն գիմող յաճախորդներն հանել տուած
լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր
մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ :

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՐՈՐԸ

ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-
նէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած
է կամ ինպատար իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ
480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր
և է ընդունութենէ մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ
ի Գահիրէ

ՏՕՐԲ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԻԱՆ

Ի Շարիա Գոթ-Պէյ, թիւ 20

Իր ԶՐԻ խորհրդակցութիւնները ասկից
վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ
ժամը (ը. ե.) Զէն 11 սրոյած ըլլալով կը
խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտու-
թիւն իրեն դիմել ուզող աղքատ հիւանդ-
ներու :

Գ Ա Ֆ Է Ս Օ Ք Ա

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցա-
նել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս
սկսած է իւր Փազար-Մրուրի խանութին մէջ
պատրաստել Եմենի ստրճին ամենալաւոր
և անխարդախ տեսակէն իրեն գիմող յաճա-
խորդներ օխան 16 շրջ ուղի հաշուով, զուտ
բաւէ պիտի կրնան գնել. կշտոյ մէջ ալ ուղ-
ղամտութիւն գտնելով :

ԳՐԲԸ ՈՒՅՈՂ ՆՅՐՈՒՆ

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հա-
սարակութեան գիւրութիւն մը տալու մտքը՝
կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք,
(Իսաական, Դպրոցական, Գիտական, Գրական
Արուեստական, Բանասիրական, Վիպական
եւ այլն) որ հրատարակուած են և կը հրա-
տարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆ-
լիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիրքա-
մատչելի պայմաններով ձեռք բերել՝ դի-
մելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալտեան
վարժարան Հայոց ի Գահիրէ :

ՏՕՐԲ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԱՐՈՑԹ

Ապսիւն Շարա Բուսի թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակումներ :

Կը դադարեցնէ վայրկենապէս սկզբայի
ցաւերը, ամբրիկեան նորագոյն մեթոտով իւր
պատրաստած դեղերով :

Կը բուժէ լինաբուր և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակումներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ճրի դարմանում,
ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ըն-
կերութենէ աւելի երաշխաւորութիւններ ,
ընդարձակ գործառնութիւններ և հրապա-
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ
ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԾԱ-
կատար յ Աղեքսանդրիա :